ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.05.2026թ.
Ժամը 10[05]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Ա. Ասատրյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան:
Բացակայում է՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ծատրյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս. Եսոյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2 . «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս. Եսոյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու

նպատակով 19.05.2026թ. հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությանը: 25.05.2026թ. հայտերի գնահատման և ամփոփման նիստի ժամանակ՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) չհամապատասխանող, մասնավորապես.

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է սույն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝ հավելված 1-ի ծանոթության 1-ին պարբերությամբ պահանջվող գնման առարկայի երաշխիքային սպասարկման կենտրոնի տվյալները:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 25.05.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: 27.05.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը) /ՀՀ դրամ/	Մրցույթին մասնակցող կազմակերպության			
					անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	դյուրակիր համակարգիչներ (Համակարգիչ Notebook i5)	հատ	355	84 774 000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	132 015 625	26 403 125	158 418 750

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 27.05.2026թ. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը որոշեց սույն ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը (պայմանագիր չի կնքվում):

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգում անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

, (Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-1/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Ասատրյան

Գնահատող, Խ. Երիցյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան